«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մ. Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Այգեստանի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտության հարց՝ Ինչպե՞ս են «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական առանցքները ձևավորում հայրենասեր քաղաքացի

Բովանդակություն

1. Ներածություն----------էջ 4

2. Գլուխ 1----------էջ 5

3. Գլուխ 2 ----------էջ 14

4. Դասի պլանավորման նմուշ-օրինակ----------էջ 20

5. Եզրակացություն----------էջ25

6. Գրականության ցանկ ----------էջ 26

Ներածություն

Յոհան Գոտֆրիդ Հերդերի կոչից՝ ժողովրդական բանահյուսության մեջ փնտրելու ժողովրդի կորած ոգին և վերածնության ճանապարհը, անցել էր հարյուր տարի: Կոչ, որն ուղղված էր մտավորական վերնախավին՝ բանաստեղծներին ու գիտնականներին, որոնց առաքելությունը էր՝ «տևական կրթության ու քարոզչության միջոցով վառել ազգային գիտակցության կայծը իրենց ննջող համերկրացիների սրտերում» : Ժողովրդական բանահյուսությունը այն «արխիվն» է, որտեղ պահպանվել են անցյալի կորած գանձերը: Այնտեղ կարելի է գտնել ազգային ոգու հետքերը, և եթե խզվել է ազգի զարգացման շարունակականությունը՝ «փրկության միակ ուղին խզման ժամանակից ի վեր պահպանված ժողովրդական բանաստեղծությունը հավաքելու մեջ է՝ օգտագործելով այն ազգային ոգին ազգին վերադարձնելու և դրանով իսկ նրա հետագա զարգացումը սեփական հիմքի վրա հնարավոր դարձնելու համար»: Ռոմանտիկ ազգայնականության գաղափարները վաղուց մեծ արձագանք էին գտել նաև ուրիշ, հատկապես՝ գաղութացված ժողովուրդների մտավորականության շրջանում Արևելյան Եվրոպայում և այլուր: Եւ ահա 1874-ին Գարեգին Սրվանձտյանցը հրապարակում է իր հավաքած բանահյուսական նյութերի առաջին հատորը և այդ հատորի մեջ՝ իր մեծ հայտնագործությունը՝ «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» ժողովրդական վեպը: Դարեր շարունակ այն պահպանվել և փոխանցվել էր ժողովրդի մեջ՝ անհայտ մնալով գրագետ խավին, և արդեն անհետացման եզրին էր: Ավելի ուշ, Եղեռնից փրկված գաղթականները իրենց հետ Արևելյան Հայաստան տարան վեպի բազմաթիվ այլ տարբերակներ, որոնք, 1915թ. և հետագայում գրի առնվելով, փրկվեցին:

<< Հայ գրականություն>> առարկայի ուսուցման բազմազան նպատակներից է աշակերտներին զինել ազգային արժեքներով: Սրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը(ազգային դաստիարակության նոր, բազմազան ուղիների ու միջոցների մշակման անհրաժեշտությամբ):

<u>Թեմայի նպատակը.</u> Էպոսի կարևոր և նշանակալի դերը աշակերտների հայրենասիրական դաստիարակության և արժեքային համակարգի ձևավորման գործում: Նշանակություն ունի նաև պատմական հիշողությունը, որով իմաստավորվում է տվյալ ազգի անցյալը և հյուսվում նրա ինքնության «ոստայնը»:

Գլուխ 1

Հետազոտական համատեքստ

«Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև»

Հովհաննես Թումանյան

Էպոսի հայտնությունը

Էպոսը այն ստեղծած ժողովրդի վերազգային ձգտումների մարմնացումն է:Հայ ժողովուրդը համաշխարհային էպիկական գրականության մեջ իր ներդրումը անելով՝ «Սասունցի Դավթի» մեջ գեղարվեստական կոթող է կանգնեցրել այնպիսի հասկացությունների համար, ինչպես են ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը և դրանց բարձր իմաստ տվող ինտերնացիոնալիզմը : Թումանյանին գրավել է մեր էպոսը հենց նրանով, որ դրա մեջ բարձր հայրենասիրությունը միացած է բարձր հումանիզմի հետ : Ժողովրդական այս ստեղծագործությունն ազատագրական պայքարի պատմություն է: Իրավացի է Հ. Թումանյանը. «Էն ժողովուրդները, որոնք աշխարքում ապրել են լայն կյանքով ու բարձր ձգտումներով, միշտ ունեցել են իրենց դյութազնական ու հերոսական դարաշրջանները՝ լիքը հրաշքներով ու առասպելներով: Ժամանակի ընթացքում սրանք, ի մի հավաքելով իրենց հերոսական դարերի առասպելներն ու իրենց պատմության մեծ հիշողությունները, հուսել են իրենց ազգային էպոսը: Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ

գանձարանն է ու իր մեծությամբ անհերքելի վկայությունը աշխարքի առջև: Ահա հայ ժողովուրդը՝ խտացած իր ազգային էպոսի՝ «Սասունցի Դավթի» մեջ»:

Էպոսը մասամբ երգվող, բայց հիմնականում պատմողական բնույթի մեծածավալ ստեղծագործություն է: Այն կազմավորվել է դարերի ընթացքում գեղարվեստորեն իմաստավորելով ժողովրդի կյանքում ճակատագրական նշանակություն ունեցող պատմական մեծ իրադարձությունները: Էպոսում արտահայտված գաղափարներն ու տրամադրությունները համահունչ են ժողովրդի ազգային աշխարհընկալմանը: Այն ներկայացնում է ամբողջ ժողովրդի հավաքական մտածողությունը ու ձգտումները, նրա աներեր կամքն ու ազգային – բարոյական կողմնորոշումը:

Հայկական ինքնության խորհրդանիշ դարձավ Սասունցի Դավթի արձանը: «Ազգային զարթոնքի» տարիները և հատկապես 1970-ականները նշանավորվեցին էպոսի նկատմամբ նոր ուշադրությամբ, նոր տարբերակների եւ ուսումնասիրությունների հրատարակությամբ: Եւ խորհրդահայ ազգային գաղափարաբանության ձևավորման այս շրջանը տրամադրում է էպոսի մասին խոսելու միանգամայն տարբեր լեզու, հռետորության նոր եղանակ, և էպոսին վերագրվում են բոլորովին այլ հիմնական իմաստներ. այն «իր ստեղծող ժողովրդի հազարամյա կյանքի գեղարվեստական տարեգրությունն է» , «ժողովրդի վիպական պատմությունը, նրա էությունն ու գաղափարաբանությունն» է , «ժողովրդի ձայնն է, նրա աշխարհընկալումը, նրա էությունը»

<u>Դյուցազներգությունը բաղկացած է չորս ճյուղից</u>՝ «Սանասար եւ Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» եւ «Փոքր Մհեր»: Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառը հայերենում նշանակում է դիվահար, խենթավուն, խելահեղ, քաջ, եւ իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար

բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում: Էպոսն անվանում են նաեւ «Ձոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն», «Հսկաների տուն», «Քաջաց տուն»: Այդ քաջաց տոհմին պատկանող կանանցից է սերվում հերոսների երեք կրտսեր սերունդ: «Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերից ամենանշանավորը եւ հայ ժողովրդին ամենահոգեհարազատը «Սասունցի Դավիթ» ճյուղն է: Այստեղ հայ ժողովուրդը նզովում է նենգ իշխաններին, եւ փառաբանում հայրենասեր, ուժեղ, քաջ հերոս Դավթին: Դավիթը դեռ փոքր ժամանակ Մելիքին ցույց է տալիս իր ուժը, նա չի հնազանդվում Մելիքին, չի անցնում թրի տակով: Մելիքի պատերազմ հայտարարելը Սասնա քաղաքին առիթ է հանդիսանում Դավթին ի ցույց դնելու իր խոհեմությունն ու բազկի ուժը: Նա հասկանում է, որ այդ պատերազմը ուղված է իր դեմ, այլ ոչ իր անմեղ ժողովրդի, ուստի եւ այս պատերազմին չպետք է մասնակից դառնային եւ ոչ մեկի անմեղ ժողովուրդը: Այսպես Դավիթն վերցնելով իր հոր զենքն ու զրահը գնում է Մսրա աշխարհ, ճանապարհին զգուշացնելով իր գալուստի մասին Մսրա աշխարհին.

-Էհե՛յ, ով քնած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,

Ով թամբել է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապել է՝ ելե՛ք, հեծե՛ք,

Չասեք Դավիթ գող-գող էկավ

Գողճգող գնաց:



Գործող անձինք

Գլուխ 2

Արդյո՞ք էպոսի միջոցով կարող ենք աշակերտների մեջ ձևավորել հայրենասիրություն

«Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության»: Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Այն ընդունակ է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերնկատմամբ և վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն և բարգավաճ: Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան, ինչպես նաև ապագան:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների

ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող

մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով(անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում ազգային արժեհամակարգը գրականության դասերին: Կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա

արժեհամակարգի ձևավորումը: Արժեքային համակարգը նախատեսում է , որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

*լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին

* կարևորի ազգային պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և

դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք

*ունենա ազգային ինքնագիտակցություն

*կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության

անհրաժեշտությունը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1 Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների հետ:

2 Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի , ապրելակերպի ու ավանդույթների, բարքի ու վարքի մասին:

3 Բացահայտել պատմամշակութային գործիչների կյանքն ու գործը:

4 Դաստիարակել խորը հայրենասիրություն , ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն:

Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում ուսումնասիրության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը: Հայկական էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով: Էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են դիցաբանական սյուժեների «զգեստավորմամբ», այլաբանական դիպվածներով և ծածկագրված խորհուրդներով, որոնք կարոտ են գաղտնազերծման և բազմակողմանի քննության: Հայկական էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային

գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն արդիական է ժամանակակից քաղաքակրթական շարժընթացների համատեքստում: Էպոսում արտացոլված են ազգային ինքնության արքետիպային գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման և հաղթահարման համար: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ազգային արժեքների ձևավորման ու պահպանման գործում փաստելով ազգային ինքնության արդիականացման և նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար էպոսը հիանալի հնարավորություններ է ընձեռում: Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է , որն իր գեղարվեստական մարմնավորումն է ստացել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում: Սասնա դյուցազունները իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ , միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Սանասարն ու Բաղդասարը հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետևորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին: Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս առյուծաձև Միհրը: Իմանալով ,որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ քայլին, որպեսզի իրենից հետո Սասունն անտեր ու անպաշտպան չմնա: Դավթի կերպարում մարմնավորվել են իրեն ծնող ժողովրդի ազգային հատկանիշները: Ազատության գաղափարը էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն: Ահա դրա մեկ օրինակը. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին: Դյուցազնավեպում ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ:Ատելությամբ է վերաբերվում թալանով ,կողոպուտով ապրողների նկատմամբ:Լայն տեղ է տրվում հնից ժառանգած և հայ ժողովրդի համար

ավանդություն դարձած կյանքի երևույթներին,դարերի ընթացքում ձևավորված ,նրան հարազատ դարձած,նրա կենցաղի մեջ մտած ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին:Դրանցից են ընտանիքի մեծ նկատմամբ խոր հարգանք ունենալը,նրան ենթարկվելը,անչափահաս ժառանգին հորեղբոր,մորեղբոր կողմից խնամելը ,փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդներին հետևելը: Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ,միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների ,ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Հայրենիքի նկատմամբ նույնպիսի պատասխանատվության զգացումով են օժտված կանայք:Նրանք գեղեցիկ են,զգայուն,խոհեմ,պարկեշտ ու միշտ պատրաստ են իրենց կյանքը զոհելու հայրենիքի ու ընտանիքի համար:Վիպերգի կանայք նաև խիզախ են ու մարտնչող(<<Ինչպես,որ Դավիթ քաջ,խորոտ մարդ էր,Խանդութ թե խորոտ էր,թե քաջ էր>>):Հայ ժողովուրդը չի ստորադասել կնոջը տղամարդուց.<<Առյուծն առյուծ է,էղնի էգ,թե որձ>>: Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը,ոչնչացրել պատմական հուշարձանները,հոգևոր և աշխարհիկ շինությունները,բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի ազատության ձգտող կենդանի ոգին:

Դասի պլանավորման նմուշ-օրինակ

Ազգային գաղափարախոսության դաստիարակումը էպոսի միջոցով

Թեման – «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» էպոսը

Դասի տիպը – Ամրապնդման դաս՝ ԽԻԿ համակարգով

Տևողությունը– 1 դասաժամ

Դասարանը՝ 10

Դասի նպատակները

• Պատկերացում տալ էպոսի ժանրային առանձնահատկության մասին:

• Ընդգծել հայկական ժողովրդական էպոսի նշանակությունը:

• Ընդհանուր պատկերացում տալ էպոսի պատմական և առասպելական շերտերի մասին:

• Դիտարկել էպոսի ճյուղերի բովանադակությունն ու գաղափարները:

Դասի խնդիրները

• Նկարագրել հայկական ժողովրդական էպոսը՝ ժանրային ու բովանդակային առանձնահատկություններով:

• Բնութագրել էպոսի հերոսներին:

• Էպոսից առանձնացնել պատմական ու առասպելական դրվագները:

• Առանձին ներկայացնել էպոսի ճյուղերը:

Մեթոդները

Կոլեկտիվ - համագործակցային, ինչպես նաև ուսուցման ակտիվ կամ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների և հնարների (մտագրոհ, մտքի քարտեզ, պրոբլեմային հարց, շարադրություն և այլն) կիրառում:

Էպոսի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

. նախապատրաստական զրույց էպոսի մասին,

. էպոսի առանձին ճյուղերի բովանդակության քննարկում,

. Էպոսի յուրաքանչյուր ճյուղի կերպարների բնորոշում,

. աշխատանք էպոսի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,

. Էպոսի հիմնական գաղափարի բացահայտում:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպման փուլ (2 – 3 րոպե)

Դասի կառավարում, անհրաժեշտ պարագաների պատրաստում, նախապատրաստական զրույց, կազմակերպչական մաս:

Դասը սկսում ենք ԽԻԿ համակարգով:

1. Խթանման փուլ (4 – 6 րոպե)

ա. Նշում ենք օրվա դասի թեման և նպատակը: Անցկացնում ենք գիտելիքների ամփոփում[a] հարց ու պատասխանի միջոցով: Հաջորդ խնդիրը, որ պետք է կարևորվի էպոսի ուսուցման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքն է: Հեքիաթի ու էպոսի ժանրային առանձնահատկությունները համեմատելով՝ կարելի է նրանց միջև ընդհանրություններ ու տարբերություններ գտնել, երեխաների ուշադրությունը հրավիրել հեքիաթի կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես հեքիաթի սկզբի, վերջի վրա: Խոսվում էնշված ժանրերի մասին, ընդգծվում , որ դրանք բանահյուսական ժանրեր են:Խոսելով տվյալ ժանրերի կառուցվածքի մասին՝ պետք է աշակերտներին բացատրել այն հանգամանքը, որ հեքիաթում և էպոսում մի խումբ կերպարներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներն իրականացնելու մղումով: Այդ կերպարներն իրար օգնում են կամ խանգարում: Այդպիսով երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև էպոսում, ինչպես նաև կյանքում, առօրյայում: Ստեղծագործության վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը և էպոսը պետք է մեկնաբանվեն, իմաստավորվեն իրենց իսկ կյանքի օրինակով:

1. Իմաստի ընկալման փուլ (25 րոպե)

Մտագրոհ մեթոդի միջոցով սկսում ենք նյութի հաղորդումը: Աշակերտներին

ներկայացվում են էպոսի չորս ճյուղերը՝ բովանդակության ամբողջական ընկալման

նպատակով: Այդ նպատակով կատարվում է.

. Էպոսի երևակայական կողմի բացահայտում,

. Էպոսի բարոյախոսական իմաստի վեր հանում,

. Էպոսի լեզվի վերլուծություն:

Էպոսի ուսումնասիրությունը իրականացվում է, ինչպես պատմվածքինը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ անհրաժեշտության դեպքում դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ: «Մտքերի քարտեզագրում» մեթոդի օգնությամբ էպոսից առանձնացվում են առասպելական հիմք ունեցող դրվագներ:

1. Երկվորյակ եղբայրների արտասովոր ջրային ծնունդը:

2. Սանասարի որդի Մեծ Միհրի՝ մարտից առաջ լողանալը հայրենի Կաթնաղբյուրի ջրով, նույնը կատարում է նրա որդի Դավիթը:

3. Սանասարի կռիվը ծովային վիշապի դեմ:

4. Սանասար ու Բաղդասար եղբայրների՝ անձրևի կամ ջրի համար կռվելը վիշապների դեմ:

5. Քառասուն -Ճյուղ-Ծամի ազատագրման դրվագը:

6. Քուռկիկ Ձալալին առնչվող տեսարանները. նա հրեղեն է, ջրային ծնունդ է, ինչպես Սասնա հերոսները:

7. Կանաչ քաղաքի վիշապի սպանության դրվագը:

8. Փոքր Միհրի՝ Ագռաքարում փակվելու դրվագը:



Խմբային աշխատանք

Թեմայի ամրապնդման համար դասարանը բաժանել 4 խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է նկարագրել «Սասանա ծռեր» էպոսը: Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը լրացնում են հարցման հետազոտական աղյուսակը:

«Սասնա ծռեր» էպոսը	
1. Նկարագրել Սանասարի կերպարը:	
2. Նկարագրել Մեծ Միհրի կերպարը:	
3. Նկարագրել Սասունցի Դավթի կերպարը:	
4. Նկարագրել Փոքր Միհրի կերպարը:	
5. Ի՞նչ է սովորեցնում էպոսը:	

Աշակերտները էպոսից պետք է առանձնացվեն նաև համապատասխան հատվածներ, որոնք բնութագրում են այս կամ այն կերպարին: Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ երեխաների ուշադրությունը հրավիրել այն հատվածների վրա, որոնք ազգային գաղափարախոսության տարրեր են բովանդակում, նաև որոշակի բառերի ու

արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն:

Նշել Սասունցի Դավթի կերպարը բնութագրող տողեր	

Աշխատանքի ավարտից հետո խմբի անդամներից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր աշխատանքը: Յուրաքանչյուր խմբին լսելուց հետո պետք է ամփոփել խմբային աշխատանքը՝ սահուն անցում կատարելով դասի հաջորդ քայլին:

Կշռադատման փուլ - 4 – 6 րոպե

Խմբային տարբեր աշխատանքներից հետո աշակերտները արտահայտում են սեփական մտքերը հայկական ժողովրդական էպոսի վերաբերյալ:

Գնահատում և անդրադարձ (2 -3 րոպե):

Հարցերի միջոցով ուսուցիչը պետք է պարզի դասի թերություններն ու առավելությունները: Գնահատումը պետք է կատարել ըստ խմբային և անհատական ցուցանիշների:

Ամբողջ դասի ընթացքում համեմատություններ են անցկացվում էպոսի և տարբեր հեքիաթների միջև, և ամբողջացվում են էպոսի վերաբերյալ աշակերտների գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը: «Սասունցի Դավիթ» էպոսի արվեստի ցուցիչն է նրանում գործող հերոսների խիստ անհատականացված և չմոռացվող կերպարների համակարգը: Հայ ազգային էպոսի յուրացումը պահանջում է բնագրի բարբառային բառերի իմացություն, որոնք այնքան էլ մեծ քանակ չեն կազմում, և դրանց մի մասը դեռ պահպանված է այսօրվա խոսակցական հայերենում: «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասախոսությունը և դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. Այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը: «Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա որպես հայ՝ որն է իր անելիքն է այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելություն, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է որ կրթության հենքը և գլխավոր իմաստը դառնա արժեհամակարգի ձևավորում: Աշակերտները բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան տեսլական՝ ինչպիսին դառնալ, դեպի ուր շարժվել <<Հայ գրականություն >> առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ և քաղաքացի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005:

2. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004

3. Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. 463 էջ.:

4. Աբեղյան Մ., Մատենագրություն Սասունցի Դավիթ Հայ ժողովրդական վեպում, Երևան, 1939:

5. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական վէպը, Թիֆլիս, 1908:

6. Հարությունյան Ս., «Սասնա ծռեր» հերոսավեպի ծիսաառասպելական մի քանի հատկանիշների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2010, N 1

7. Հովսեփյան Լ., Հրաշապատում հեքիաթի տարրերը «Սասնա ծռեր» էպոսում// «Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» էպոսը», Երևան, 2015:

8.https://aspu.am/website/images/files/GAYANE%20MARDYAN-%20SASUNCI%20DAVIT%20EPOSI%20USUCMAN%20MI%20ARQ%20XNDIRNER.

Գ Ա Յ Ա Ն Ե Մ Ա Ր Դ Յ Ա Ն «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ